ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 2023-2024 ուսումնական տարվա 1–ին փուլի ընդունելություն:

Ընդունելության դիմում-հայտը լրացվում է տեղում՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:
Դիմում-հայտին կցվող փաստաթղթերի ցանկը.

1. բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնօրինակն ու պատճենը,
2. 4 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
3. ինքնակենսագրություն,
4. անձը հաստատող փաստաթուղթը և պատճենը,
5. զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճենը (առկայության դեպքում),
6. հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը (դրանց առկայության դեպքում),
7. ՀՀ օրեսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճենը (հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք, եթե հավակնորդը I կամ II խմբի հաշմանդամ է, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ, զոհված զինծառայողի երեխա լինելու մասին փաստաթղթեր),
8. ընդունելության ծառայությունների համար սահմանված 5000 դրամի վճարի անդորրագիրը:

2023-2024 ուստարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ընդունելությունն իրականացվում է 2 փուլով:
Առաջին փուլով կատարվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը:
Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 5-23-ը (ներառյալ), ժամը 09:00-17:00, հարցազրույցը՝ հունիսի 27-ին:

Երկրորդ փուլով կատարվում է վճարովի, առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը:
Փաստաթղթերն ընդունվում են մինչև օգոստոսի 26-ը:

Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա:
Դիմորդների հավասար ՄՈԳ-ի դեպքում հաշվի են առնվում հետևյալ չափանիշները ըստ առաջնահերթության.

- մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը,
- տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայություն,
- ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականը կամ միջին որակական գնահատականը:

Դիմումները ներկայացնել հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 11, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին (Գայանե Թամրազյան, հեռ.՝ (010) 55-33-10(1-64)):